


ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Գ Ե Ր Ե Ջ Մ Ա Ն Ի Դ Ա Ռ Ջ Ե Ի



Ու կը նիրհե՛ս, մեծ օրէն վերջ, այս լո՛ւռ շիրմի
Թեւերուն սակ .

Մեր բաժնըւած հրնադարեան փառքերուն մէջ .

Դո՛ւն հանանջ մը անեւջ փառքին՝

Պրիամակուած մեր հիմաւորց

Անմահներէն :

Դուն Մեւրոպէն պակեր անմեռ ,

Մեծ Պարթևի հաննարը պերհ ,

Աստուածախօս Նարեկացոյն յո՛յզը հրդեհ ,

Խիղճն ազամանդ Շնորհալոյն :

Ներհուն դպիր սուրբ մասեանին ,

Ոսկեդարու ջինջ արձագանգ .

Որ գահընկէց մեր օրերու իմաստութեան ըսպասին մէջ՝

Եղար արի՛ եւ աննահանջ ,

Ու փայլեցա՛ր խաւարին դէմ

Եօրնաստեղեան ջահի մը պէս :

Խաղաղութեան՝ դուն ծիրանի առաքեալ ,

Շունչըդ բարի , բարի անձրեւ

Սա ծփանուդ յարկին վրայ .

Փոքորկէն վերջ :

Նման Կուրմին , իր աստուծոյն հրայրքին մէջ ,

Դուն վառեցիր կայծն հիմաւորց անուանին ,

Սաղիմական այս բարձունքին :

Եւ դուն եկա՛ր խաղաղութեան

Շունչի մը պէս ,

Ծիածանուիլ այս սուրբ յարկի

Երկինքին մէջ ,

Ծաւալելով սարաւխարհիկ

Խունկն հոգիիդ :

Ստուերներն իսկ այս սուրբ յարկին ,

Իրենց խոժոռ նկարներէն , հաղցրահայեանց , ու ժրպիտով ,

Ողջունեցին Բու գալուստը շնորհաբեր .

Խաղաղութիւն

Իջաւ անձեղ :

Ու ծաղկեցաւ եղբայրութեան մօրն ձիբկներն
 Շունչիդ ներեա հոգեհրմայ :
 Եւ դուն եկա՛ր ,
 Օսականի մեծ նիրհողի հուրով լեցուած .
 Մինչ հոգիիդ մէջ կը մեծնա՛ր
 Իսէպիւն այգը ոսկի ,
 Եւ վրէժի բոցը կարմիր , Բու հոգեծիւն
 Զաւակներուն :

Եւ Սիոնի այս բարձունքէն՝
 Ինչպէս երբեմն Արմաշի .
 Հեղեղեցիր մեզը մսփիդ
 Ծարաւահիւժ հոգիներուն մէջ երջանիկ :
 Ռ՛վ, դուն լոյսի հըսկայ փառոս ,
 Զգացումի անհուն պարսէզ ,
 Եւ Բու հոգիդ սիրոյ երկինք ,
 Մասեանի մը նըման բացուած
 Մեր աչկերուն :

Բայց երազին հազիւ քերթած
 Էջն առաջին .
 Մահուան սժգոյն մասներուն սակ
 Հուսկ փակուեցաւ նայուածքդ անո՛յժ
 Աստեանական վընիս լոյսին :
 Բայց մընացիր հաւասարիմ , մեծ սարազին Բու մեծ եղբօր ,
 «Թէ՛ նառագայրն Ե՛րբ է քաղութեք» ,
 Ու դուն մահովդ անմահացար :

Թող սուր ինծի , ո՛վ անսահման
 Ներողութիւն .
 Երբ այսօր յիշատակիդ առջեւ կեցած ,
 Եւ մին յետին մսածումիդ զաւակներէն ,
 Փոխան ուրիշ հազարներու ,
 Անգամ մըն ալ արսասուազին , իմ հոգիիս երգը երգեմ ,
 Պաղատելով , որ դուն բնաւ մեզ չըլլես ,
 Ու հոգիովդ մեզ հետ ըլլաս ,
 Յաւերժօրէն մեզ խրախոյս ,
 Պարսփի , զոհի ու զիսութեան սուրբ համբային՝
 Մեզի ուսնորդ
 Մահէն ալ վեր , մահէն ալ վերջ :

ԵՂԻՎԱՐԿ